ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 20 23.12.2016թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Թույլատրել համայնքի ղեկավարին 2016թ. բյուջեում փոփոխություններ կատարելու.
ա/<<Սոցիալական անապահով անձանց աջակցություն>>գործառնական դասակարգման ծախսային ծրագրի /բաժին 10,խումբ 07,կարգ 1,ծրագիր 54/տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածի պլանը ավելացնել 940,0/ինը հարյուր քառասուն հազար/ՀՀ դրամով ճշտված պլանը սահմանել 4730,0/չորս միլիոն յոթ հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ,4726 հոդվածի պլանը ավելացնել 60,0/վաթսուն հազար/ ՀՀ դրամով ճշտված պլանը սահմանել 540,0/հինգ հարյուր քառասուն հազար/ՀՀ դրամ:
բ/՝<<Առողջապահության օբյեկտների հիմնանորոգում>գործառնական դասակարգման ծախսային ծրագրի / բաժին 07, խումբ 06 ,կարգ 1, ծրագիր 51/ տնտեսագիտական դասակարգման 4639 հոդվածի պլանը պակասեցնել 600,0 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամով պլան չսահմանել :
գ/<<Աղբահանություն և սանիտարական մաքրում>>գործառնական դասակարգման ծախսային ծրագրի 4213 հոդվածի պլանը պակասեցնել 1080,0 /մեկ միլիոն ութանասուն հազար / ՀՀ դրամով,պլան չսահմանել,4264 հոդվածի պլանը պակասեցնել 410.0/չորս հարյուր տաս հազար/ՀՀ դրամով պլան չսահմանել,4269 հոդվածի պլանը պակասեցնել 600,0/վեց հարյուր հազար/ ՀՀ դրամով պլան չսահամանել:
դ/ << Կառավարման մարմնի պահպանում>> գործառնական դասակարգման ծախսային ծրագրի 4313 հոդվածի պլանը պակասեցնել 40,0/քառասուն հազար /ՀՀ դրամով,պլան չսահմանել,4221 հոդվածի պլանը պակասեցնել 122,0/մեկ հարյուր քսաներկու հազար/ ՀՀ դրամով ճշտված պլանը սահմանել 28,0/քսանութ հազար/ ՀՀ դրամ,4269 հոդվածի պլանը պակասեցնել 120,0/մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամով պլան չսահմանել,4823 հոդվածի պլանը պակասեցնել 20,0/քսան հազար/ ՀՀ դրամով պլան չսահմանել:
ե/<<Ջրային կառույցների շահագործում և պահպանում>> գործառնական դասակարգման ծախսային ծրագրի 4213 հոդվածի պլանը պակասեցնել 1400,0/մեկ միլիոն ձորս հարյուր հազար/ ՀՀ դրամով ճշտված պլանը սահմանել 1700,0/մեկ միլիոն յոթ հարյուր հազար/ՀՀ դրամ,4239 հոդվածի պլանը պակասեցնել 1832,0/մեկ միլիոն ութ հարյուր երեսուննինը հազար/ՀՀ դրամով պլան չսահմանել:
զ/ << Անապահով ընտանիքներից բարձրագույն կրթություն ստացող ուսանողների>> գործառնական դասակարգման ծախսային ծրագրի 4239 հոդվածի պլանը պակասեցնել 1700 /մեկ միլիոն յոթ հարյուր հազար/ՀՀ դրամով պլան չսահմանել:
է/

Կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ -0

Հ. Աբրահամյան

Պ. Ադամյան

Վ. Ղազարյան

Կ. Մարտիրոսյան

Կ. Գրիգորյան

Լ. Նազարյան

Ս. Խուդոյան

Համայնքի ղեկավար Կ . Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 21 23.12.2016թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի հատկանիշով և << Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հ անրապետության օրենքի համաձայն` համայնքի ավագանին որոշում է

Հաստատել 2017թ.-ի տեղական տուրքերի դրույքաչափերը:
1.ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա-շինարարական նախագծին համապատասխան` նոր շենքերի,շինությունների /ներառյալ` ոչ հիմնական / շինարարության տեղադրման թույլտվություն տալու համար տեղական տուրքը սահմանվում է `

Հիմնական օբյեկտների համար`
ա/ մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում ` այգեգործական/ ամառանոցային տների/ , ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 15000 դրամ
բ/ Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար`
բա / 201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 30000 դրամ
բբ/ 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 70000 դրամ
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար`
գ/ մինչև 20քմ ընդհանուր մակերոս ունեցող օբյեկտների համար` 3000 դրամ
դ/ 20 և ավեմի քմ ընդհանուր մակերոս ունեցող օբյեկտների համար` 5000 դրամ:
2.Համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման , ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված` շինարարության թույտվության չպահանջվող դեպքերի/ համար , եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարական նախագծով.
ա/ չի նախատեսվում կցակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հատնանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն`3000 դրամ
բ/ բացի օբյեկտի վերակառուցման ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ` ստորգետնյա/ հետնանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով :

գ/ նախատեսված են նաև միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն , ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար առաջին կետով սահմանված նորմերը.

3. համայնքի վարչական տարածքում,շենքերի, շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4. համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է `

ա/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար ` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար ` 2500 դրամ.

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար ` 2500 դրամ.

5. համայնքի տարածքում .

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:

բ/ հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և / կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների թույտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:

գ/ խանութներում ,կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքով զբաղվող օբյեկտների համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30000 դրամ:

6. համայնքի տարածքում հանրային սննդի , զվարճանքի, շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները / սաունաները/ , խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույտվության համար ` տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է `

ա/ առևտրի օբյեկտների համար ` 25000 դրամ

բ/ բաղնիքների/ սաունաների/ համար `200000 դրամ

գ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար ` 50000 դրամ

դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար ` 100000 դրամ

7. համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ մետր տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ

բ/ թունդ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ

գ/ այլ արտաքին գովազդի համար ` 1000 դրամ

դ/ դատարկ գովազդային վահանակների համար ` 700 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 22 23.12.2016թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Սուրենավան համայնքի համայնքային սեփականության օբյեկտերի ամենամյա գույքագրման արդյունքները,դրանցում դուրս գրված գույքը ըստ հանձնաժողովի կողմից կազմված / թիվ 1,2,3 ակտերի/:

Կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ -0

Հ. Աբրահամյան

Պ. Ադամյան

Կ. Մարտիրոսյան

Լ. Նադարյան

Վ. Ղազարյան

Կ. Գրիգորյան

Ս. Խուդոյան

Համայնքի ղեկավար Կ . Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 23 23.12.2016թ.

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող հողերը առանձնացնելու և մրցույթի կարգով վարձակալությամբ տալու:

Վեդու Ներքին Արփայի գոտուց.

1.Լոտ ծածկագիր 03-086-921-0001-0001-ից 0,4582 հա վարելահող

2.Լոտ ծածկագիր 03-086-0001-0001-ից 0,6199 հա վարելահող

3.Լոտ ծածկագիր 03-086-0001-0001-ից 0,5969 հա վարելահող

Ընդամենը- 1,6748 հա

2.Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով մրցույթով վարձակալությամբ տրվող հողամասի մերկնարկային վարձավճարը սահմանել հողամասի զուտ եկամտի 22% :

3.Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով մրցույթով վարձակալությամբ տրվող հողամասի նվազագույն մեկ չափաբաժինը սահմանել 1,0 հա:

Կողմ- 7 դեմ-0 ձեռնպահ -0

Է. Աբրահամյան

Պ. Ադամյան

Կ. Մարտիրոսյան

Լ. Նադարյան

Վ. Ղազարյան

Կ. Գրիգորյան

Ս. Խուդոյան

Համայնքի ղեկավար Կ . Կարապետյան